ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱՐԳԱՅԻՆ ՈՐՈՇՈՒՄԸ

ՀՀ ՆԱԽԱԳԱՀԻ ԹԵԿՆԱԾՈՒ ԱՆԴՐԻԱՍ ՂՈՒԿԱՍՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ՝ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ ԸՆՏՐՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 25.02.2013Թ. ԹԻՎ 62-Ա ՈՐՈՇՈՒՄԸ ՎԻՃԱՐԿԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

ՀՀ Սահմանադրության 100-րդ հոդվածի 3.1-րդ կետի և «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի և ՀՀ ընտրական օրենսգրքի պահանջներից ելնելով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **ՈՐՈՇԵՑ**.

1. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 3-րդ մասի, ինչպես նաև նկատի ունենալով 2013թ. մարտի 5-ի ՍԴԱՈ-13 որոշման նախաբանում բերված փաստարկները, «ՀՀ Նախագահի թեկնածու Անդրիաս Ղուկասյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 25.02.2013թ. թիվ 62-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործն ընդունել քննության:

2. Հաշվի առնելով, որ «ՀՀ Նախագահի թեկնածու Անդրիաս Ղուկասյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 25.02.2013թ. թիվ 62-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործը և սահմանադրական դատարանի կողմից քննության ընդունված՝ «ՀՀ Նախագահի թեկնածու Ռաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի դիմումի հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 25.02.2013թ. թիվ 62-Ա որոշումը վիճարկելու վերաբերյալ» գործերը վերաբերում են նույն հարցին, համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 39-րդ հոդվածի՝ նշված գործերը միավորել և քննել դատարանի նույն նիստում:

3. «ՀՀ Նախագահի թեկնածուներ Ռաֆֆի Կ. Ռիչարդի Հովհաննիսյանի և Անդրիաս Ղուկասյանի դիմումների հիման վրա՝ «Հայաստանի Հանրապետության Նախագահ ընտրվելու մասին» ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովի 25.02.2013թ. թիվ 62-Ա

որոշումը վիճարկելու վերաբերյալ» միավորված գործի դատաքննությունն սկսել 2013թ. մարտի 11-ին, ժամը 10.00-ին։

4. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 31-րդ հոդվածի 5-րդ մասի՝ միավորված գործով զեկուցողներ նշանակել ՀՀ սահմանադրական դատարանի անդամներ Կ. Բալայանին, Ֆ. Թոխյանին և Ա. Խաչատրյանին։

5. «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 9-րդ մասի հիման վրա միավորված գործի դատաքննությունն անցկացնել բանավոր ընթացակարգով։

6. Համաձայն «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի՝ նշված գործը քննելիս որպես պատասխանող կողմ դատավարությանը ներգրավել ընտրության արդյունքներն ամփոփող պետական մարմնին՝ ՀՀ կենտրոնական ընտրական հանձնաժողովին։

«Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 74-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքերով սույն գործով որպես հարակից պատասխանողներ՝ իրենց իրավասությունների հետ կապված հարցերով, ներգրավել ՀՀ դատախազությանը և ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանությանը։

7. Սահմանադրական դատարանի 2013թ. մարտի 5-ի ՍԴԱՈ-13 որոշման 6-րդ և 7-րդ կետերով նախատեսված պահանջները հավասարապես վերաբերում են միավորված գործին։

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ
ՆԱԽԱԳԱՀ Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

5 մարտի 2013 թվականի
ՍԴԱՈ-14